դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Սակայն, այդ բողոքարկումը պետք է լինի թիրախային, և այդ բողոքարկման արդյունքում հայցվորը պետք է կարողանա հասնել իր համար ցանկալի արդյունքին՝ իր ենթադրյալ խախտված իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը:

Համակարծիք լինելով Վերաքննիչ դատարանի կողմից արտահայտված դիրքորոշման հետ՝ դատարանը գտնում է, որ ԱՁ Կարեն Արտաշեսի Մանուկյանը չի հիմնավորել վերը նշված փաստակազմի առկայության պայմաններում ՇՄԳ5ՀԴ-ԳՀԱՊՁԲ-25 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած չհայտարարելու պայմաններում նոր՝ ՇՄԳ5ՀԴ-ԳՀԱՊՁԲ-25/2 գնման ընթացակարգը հայտարարելու մասին որոշմամբ իր որ իրավունքներն են իրականում խախտվել և ինչ անբարենպաստ հետևանքների է հանգեցրել այդ խախտումը, հայցվորը չի հիմնավորել, թե պատասխանողի իրավախախտման արդյունքում իր որ իրավունքն է խախտվել, հատկապես եթե նկատի ունենանք, որ ԱՁ Կարեն Արտաշեսի Մանուկյանը զրկված չի եղել թիվ ՇՄԳ5ՀԴ-ԳՀԱՊՁԲ-25/2 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու և (կամ) հաղթող ճանաչվելու հնարավորությունից:

Նման պայմաններում դատարանը հանգում է հետևության առ այն, որ սույն քաղաքացիական գործով ԱՁ Կարեն Արտաշեսի Մանուկյանն այդ հիմքով վիճարկելու ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման թիվ ՇՄԳ5ՀԴ-ԳՀԱՊՁԲ-25/2 գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.01.2025 թվականի թիվ 1 որոշումը, չի հիմնավորել իր շահագրգռվածությունը, որպիսի պայմաններում դատարանը գտնում է, որ հայցը ենթակա է մերժման:

4. Դատական ծախսեր.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերի հետ կապված պահանջները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում՝ գրավոր միջնորդության տեսքով: Նման պահանջից հրաժարվելու կամ այդ կարգը չպահպանելու դեպքում դատական ծախսերի հատուցման հարցը համարվում է լուծված:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձանց կրած, ինչպես նաև վճարման ենթակա դատական ծախսերի փոխհատուցման հարցը լուծելիս դատարանը հիմք է ընդունում միայն գործում առկա փաստաթղթերով հիմնավորված ծախսերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Տվյալ դեպքում, հաշվի առնելով, որ հայցվորը վճարել է օրենքով սահմանված պետական տուրքի գումարը, թե հայցադիմումը ներկայացնելիս, թե վերաքննիչ բողոքը ներկայացնելիս, և նկատի ունենալով, որ հայցը ենթակա է մերժման՝ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցը պետք է համարել լուծված:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 362-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. ԱՁ Կարեն Արտաշեսի Մանուկյանի հայցն ընդդեմ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու թիվ 5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության՝ ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման թիվ ՇՄԳ5ՀԴ-ԳՀԱՊՁԲ-25/2 գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.01.2025 թվականի թիվ 1 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:
2. Դատական ծախսերի, այդ թվում՝ պետական տուրքի հարցը համարել լուծված:
3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և հրապարակման պահից մեկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

ԴԱՏԱՎՈՐ Ռ.Մ.ԲՈՒՆԻԱԹՅԱՆ

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE00-401F-4F77-8C28 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am